

659

Ch - 45

Թիֆլիսի ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

595.1

№ 108.

ՍՆԿԵՐԵԼՈՅԹ ՀԱՂԱԳՈՐԾ

(Կ ա ը մ ե լ լ ը - Ա կ հ ա ռ ւ)

Ը Ս Տ Ա Բ Լ Զ Դ Ա Բ Ա Վ Վ Ի Ն Ե

Մուսերէնից փոխադրեց

Լեին Մելիք-Ադամեան

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տիպogr. Груз. Изд. Т-ва. || Տպարան Վայց. Հրատ. Ընկ.

1896

L 6 FEB 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 31-го Января 1896 г.



ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂ ԱԳՈՐԾ



Ա

Արար-աշխարհում հազար ու մի օգտակար և շահաւետ բաներ կան, որոնց մասին մենք կամ ամենևսին տեղեկութիւն չունինք և կամ այնքան քիչ են մեր ունեցած տեղեկութիւնները, որ բոլորովին անօգուտ են մընում թէ մեզ համար և թէ մեր ապրուստի ու կենցաղավարութեան համար։ Այն ինչ՝ եթէ հնար եղածին չափ ճիշտ, մանրամասն և հարկաւոր ծանօթութիւնները ձեռք բերէինք այդ տեսակ շահաւետ բաների վերաբերմամբ, մենք շատ ու շատ օգուտներ կարող էինք քաղել մեր իմացածներից։ Բայց ցաւալին այն է որ մեզանից շատերս՝ անգէտ ու անտեղեակ մնալով դրանց մասին՝ ոչ միայն չենք օգտառմ այդ շահաւետ բաներից, այլ դեռ շատ անգամ մենք ինքներս ենք վնաս պատճառում մեզ՝ կամ բոլորովին աչքաթող անելով և կամ իսպառ ոչնչացնելով ու ջընջելով այն ամենը, ինչի մասին որ մենք ինք-

ներս պէտք է դեռ մի առանձին խնամք ու
հոգ տանէինք, հոգացողութիւն ցոյց տալինք:

Ահա հէնց ալդպիսի բազմաթիւ շահե-
կան և օգտակար բաներից մէկի մասին է
հետևեալ զըոյցը, որ կարդալու էք ալս գըր-
քոյկի մէջ:

Ի հարկէ դուք ամենքդ էլ տեսած կը-
լինիք կարմիր-ճիճու *), և ուրեմն գի-
տէք թէ ալդ փոքրիկ կենդանին իւր տես-
քով ինչ զզուելի և անդուր բան է: Եւ ան-
շուշտ ձեզանից շատ քչերը կըհամաձայնեն
ձեռը տալ մի ալդպիսի գանելու բանի. իսկ
շատերդ հօ ով գիտէ՝ ինչ թթու դէմք էք
ցոյց տալիս ու զզուանք արտայալտում ալդ
տգեղ արարածի լոկ միայն անունը մտաբե-
րելով:

Եւ ճշմարիտ որ՝ ում պիտի հետաքրքրի և
կամ ում պիտի հրապուրի ալդ խեղճ-ողորմե-
լի կարմիր-ճիճուն. շատ-շատ՝ կարթով ձուկ
բռնողներին, որոնք որոնելով գտնում հա-
նում են գետնի միջից, որպէսզի անգթօրէն

*) Տեղ-տեղ դրան ասում են նաև անձրեա-
յին-ճիճու և կամ միայն ճիճու, բոտոտ,
լպրտուկ, որդն և այլն:

տանջեն խեղճ կենդանուն՝ միամիտ ձկներին հրապուրելու նպատակով իրանց կարթի ծալրին ամրացնելով։ Բայց և այնպէս կան արարածներ, որոնց համար կարմիր-ճիճուն թէ հետաքրքիր և թէ հրապուրիչ է ճիշտ ալնպէս, ինչպէս որ ձեզ համար հրապուրիչ են այն շաքարահացերն ու շաքարեղէնները, որ ի ցոյց են լինում դրած քաղցրեղէն վաճառողները իրանց խանութների լուսամուտներում, դարակների վրայ։

— Այդ ովքեր են ալդ քաղցրասէրները,
հիմա կ'ասէք դուք։

— Իրանց թիւը անչափ շատ է։ Փորձի համար մէկ հարցրէք ճիճուին, թէ պատճառըն ինչ է, որ ամբողջ օրը մնում է նստած գետնի տակ, իւր բնի մէջ, և միայն գիշերով՝ երբ արդէն մութը բոլորովին պատում է, սիրտ է անում դուրս սողալ բնից, որ նոր կարողանալ Աստծու ստեղծած աշխարհը տեսնել և մաքուր օդ ծծել։ Ինչ ասել կ'ուզի՛ որ եթէ նա ալդպէս վախենում է ցերեկուալ լուսից, պատճառն այն չէ, որ ամաչում է իւր մերկ ու անդուր արտաքինի համար, ալլ իսկապէս այն, որ նա երկիւղ է կրում իւր համար խելքահան լինողներից։

— Խելքահան լինողներ... Ինչեր էք ա-

սում... Խելքահան են լինում և այն էլ ալդ
զգուելի ճիճուկի—լպրտուկի համար:

—Ալո՛, ինչ է որ: Հապա ի՞նչ էք կարծում.
գուք այնպէս իմանում էք թէ կարմիր-ճի-
ճուն հաւանողներ չունիք. սխալում էք,
սիրելիք, ալգպէս կարծելով: Ալո՛, նա էլ ու-
նի հաւանողներ, և այն էլ ի՞նչպէս ժիր, աշ-
խոյժ, կայտառ ու տաքսիրտ հաւանողներ:

—Ո՞վքեր են ալդ տարօրինակ ճաշակի
տէ ըերբ:

—Նախ և առաջ՝ իմ սիրելիք, թռչուն-
ները, որոնք ոչ մի առիթ, ոչ մի լաջող դէպք
կամ լարմար ըոպէ ձեռքից բաց չեն թող-
նում, որ կարողանան իրանց բերանները քաղց-
րացնել մեր փոքրիկ հերոսի համեղ մսով. վրայ
երկրորդ՝ խլուրդները, որոնցից ազատուելու
համար խեղճ անասունը շատ ու շատ անգամ
է ստիպում լական թօթափել, ալսինքն
աչքի մի ճաղելում դուքս սողալ իւր բնից երկ-
րի երեսը. վրայ երրորդ՝ բնագէտները, որոնք
նաև կարմիր-ճիճուկի ուսումնասիրութեամբ
են պարապում. վրայ չորրորդ՝ ձեր խոնարհ
ծառան—ճիճուների վերաբերմամբ ձեզ հետ
զըուցողը, որ պիտի պատմէ ձեզ համար այն
զարմանալի բաները, ինչ որ մեր դարու ա-
մենանշանաւոր բնագէտ հանգուցեալ Զարլզ

Դարվինն իմացել է կարմիր-ճիճուների մասին.
իսկ վրայ հինգերորդ՝ դուք, սիրելի ընթեր-
ցողներ:

—Մենք էլ...

—Խօսքս միք ընդհատիլ... Այո՛, դուք ևս.
որովհետեւ եթէ ուշադրութեամբ կարդաք
ալս գրքովկը և մօտիկից ծանօթանաք մեր
հերոսի կեանքի ու կենցաղավարութեան հետ,
անկասկած գրանից լետոյ դուք ևս շատ կը-
հաւանէք նրան և մտաբերելիս այլւս թը-
թու դէմք չէք ցոյց տալ, էլ զզուանք չէք
արտալայտիլ. բացի գրանից ձեզ պատահած
ժամանակն էլ խլուրդների ու թռչունների
նման թշնամաբար չէք վարուիլ խեղճ անա-
սունի հետ, ոչ մի վնաս չէք հասցնիլ նրան:

❖

Արդէն ասացինք որ մեր զըուցի առար-
կալ հերոսը շատ էլ գեղեցիկներից չէ: Ահա
նկարագրեմ ձեզ նրա արտաքինը.

Կարմիր-ճիճուի մարմինը մօտ 100—200
օղակներից է բաղկացած. նրա մարմնի վրայ
ոչ գլուխ է նկատւում, ոչ թաթիկներ, ոչ
տոտիկներ, ոչ աչիկներ և ոչ էլ ականջներ.
մէկ խօսքով և ոչ մի գործարան: Միայն ե-

թէ խոշորացուցով ուշադրութեամբ դիտենք, կըտեսնենք որ ալդ օղակները պատաժ են շատ բարակ մազերով, որոնք թեքուած են դէպի լետ: Այդ բարակ մազերի օգնութեամբ է որ կարմիր-ճիճուն կարողանում է առաջ շարժուել: Մարմնի մի ծալրի վրայ մի փոքրիկ բացուածք է նկատւում. ալդ էլ նրա բերանն է, որ ուժեղ մկաններով սրածալր շենք—ընձիւղներ ունի, որոնցով նա կարողանում է իրան հանդիպած առարկաները բռնել: Այդ բացուածքը ճիճուի համար թէ շրթունքներ են և թէ թաթիկներ: Իսկ մարմնի միւս ծալրին էլ մի ուրիշ բացուած կալ. ալդտեղից էլ ճիճուն արտաթորում է իւր մարմնի մէջ եղած անպէտք նիւթերը: Ահա հէնց ալդ է, ինչ որ կարելի է նկատել ճիճուի արտաքինը դիտելով: Հա, մէկ էլ ալն, որ նրա ամբողջ մարմինը ծածկուած է լորձանիւթով, որի պատճառով է երեխ որ նաև լպրտուկ է կոչւում:

Առաջ այնպէս էին իմանում թէ կարմիր-ճիճունները բոլորովին կոլը են: Դորդ է, որ ճիճունները աչիկներ չունին, բայց նրանց բոլորովին կոլը անուանել նոյնպէս չի կարելի: Ահա թէ ինչ է պատճում ալդ մասին վերոլիշեալ նշանաւոր բնագէտ Զարլզ Դար-

վինը, որ քանի մի անքուն գիշերներ լուսացնելով՝ փորձեր է արել ճիճուների տեսողութեան վերաբերեալ։ Նա դրանցից մի քանիսին բռնոտել դրել է հողով լիքը ծաղկամանների մէջ և բերանները ծածկել ապակեալ կափարիչներով — ծածկոցներով։

Զմոռանամ ասելու որ ճիճուները ցերեկով վախկոտ են և շատ զգոյշ, այն ինչ գիշերներով բաւական համարձակ են լինում։ Ցերեկները նրանք թաքնուում են գետնի տակ և առանց դուրս սողալու մնում են նստած իրանց բներում։ Բայց հէնց որ մութն ընկնում է, կարծէք ճիճուների օրը նոր է բացւում։ անմիջապէս դուրս են գալիս իրանց բներից՝ միայն պոչիկները թողնելով ներսը։ իսկ մարմնի այն մասը, որ բնից դուրս են բերել, սկսում են շնորհաշուաք կերպով ծածրութարակ տարութերել և այդ կերպով զուարճանալ թարմ օդով։

Փորձելու համար թէ արդեօք ճիճուները կարող են տեսնել, Դարվինը գիշերով վառած լապտերն զգուշութեամբ մօտեցը ել է նրանց։ Ճիճուներն սկզբում ամենևին ուշադրութիւն չեն դարձրել այդ անսպասելի լուսավառութեան վրալ, բայց լետոյ՝ երբ միքանի ըռպէ շարունակուել է լապտերի լոյսը, նրանք

սկսել են դեռ անհանգստութիւն ցոյց տալ
և ապա շտապել են մտնել իրանց բնե-
րը։ Սակայն միշտ էլ ալդպէս չէ եղել. օրի-
նակ՝ երբ նրանք եռանդով զբաղուած են ե-
ղելընթրելով և կամ որևէ գործով, ալդ միջո-
ցին նրանք ամենափոքը ուշադրութիւն ան-
դամ չեն դարձրել լապտերի լոյսի վրա։

Ալդպէս՝ համոզուելով որ կարմիր-ճիճու-
ները բոլորովին էլ կոլը չեն, ինչպէս որ ենթա-
դրում էին, Դարվինը կամեցել է նաև փոր-
ձել, թէ արդեօք լսում էլ են։ Օլդ մասին
նա պատմում է հետևեալը.

«Կարմիր-ճիճուները իսպառ զուրկ են
լսողութիւնից, որովհետև նրանք ամենաան-
նշան ուշադրութիւն խսկ չդարձրին այն մետա-
ղեալ սուլոցի սուր ձայներին, որ քանի մի
անգամ կրկնեցի նրանցից շատ մօտիկ. նմա-
նապէս անտարբեր մնացին թէ ամենացածր
ձայներին և թէ ամենարարձր բամբերին (Փա-
գօտի ձայներին)։ Աղաղակի վրայ ևս բոլո-
րովին ուշադրութիւն չեն դարձնում, եթէ
միայն զգուշացուի որ աղաղակելիս բերանի
հուրքը—շունչը չդիպչի նրանց։ Երբ ճի-
ճուներին դնում էի սեղանի վրայ և սեղանը
մօտեցնում դաշնամուրին, նրանք կատարելա-

պէս հանգիստ էին մնում նոյնիսկ ամենազօրեղ դաշնակահարութեան միջոցին»:

Բայց դրա հակառակ՝ մեր գետնաբնակ բարեկամները շատ լաւ են զգում իրանց բնակած գետնի նոյնիսկ ամենաթով տատանումը: Դարվինը՝ բազմաթիւ փորձեր անելուց լետոյ ալդ բանում ևս համոզուել է: Ահա նրա կատարած բազմաթիւ փորձերից մինը.

«Մէջը ճիճուներ դրած ծաղկամանը, ասում է Դարվինը, դրի դաշնամուրի վրայ և սկսեցի նուագել: Դաշնակահարութեան հէնց առաջին ձայնից ծաղկամանի բնակիչներն սկսեցին թաքնուել հողի մէջ»:

—Ի՞նչ էք կարծում, ի՞նչից թաքնուեցին:

—Ի հարկէ դաշնամուրի ձայնից:

—Ոչ. այլ որովհետեւ նուագելիս դաշնամուրի ծածկն սկսեց դողդողալ: Ծաղկամանին ամենաթով կերպով հպումն—կամաց ձեռք տալը ևս ստիպում է ճիճուներին պահ մտնել:

Բայց լաւ է զարգացած կարմիր-ճիճուների շօշափողութիւնը. փչած ամենաբարակ հովը և կամ շատ թով հուրքն իսկ զգում են լորձանիւթով պատած մաշկովը և իսկոյն շտապում են մտնել իրանց բները:

Սակայն նրանց հստառութիւնը շատ թովէ: Դարվինը՝ ամենաընտիր տեսակի հստաւէտ իւ-

զեր է մօտեցըել իւր սանիկներին — կարմիր-ճիճուներին, սակայն ալդ տարօրինակ արա-բածները ոչ մի բանավ չեն ցոլց տուել, թէ իրանք որեւէ հոտ զգում են։ Այն ինչ շատ լաւ են զգում սոխի, կաղամբի հոտը, որ անչափ մեծ բաւականութիւն է պատճառում ճիճու-ներին, որոնք անմիջապէս վրայ են ընկնում և ուտում նրանց համեղ թերթերը։ Դարվինը փորձի համար կաղամբի թերեր է պահել հո-ղի մէջ. ճիճուները որոնել գտել են այսպէս լաւ, ինչպէս որ որսկանի շունը գտնում է որսը։ Բայցի կաղամբից ու սոխից, ճիճուները սիրում են նաև քրէն, նեխուը և ստեպղի-նի — գազարի թերեր. լաւ ուտում են նաև շաքար, օսլա, ճարպ. իսկ երբ ուտելու ուրիշ բան չի լինում, կարիքից ստիպուած նրանք բաւականանում են միմիայն հողով և փուած տերեւներով։

¶

Ալդ ամենն իմանալուց լետոյ եթէ գոնէ մի քիչ համակրութիւն զարթեց ձեր մէջ դէ-պի մեր գետնաբնակ բարեկամները, ապա ու-ըեմն կարելի է մի փոքրիկ առաջարկութիւն

անել ձեզ։ Մի քանի կարմիր-ճիճու գտէք և
դրէք հողով լի ծաղկամանների մէջ, որոնց բե-
րանները ծածկեցէք ապակեալ ծածկոցով և
ուշադրութեամբ դիտեցէք ձեր գիշերօթիկնե-
րի կեանքը։ Հաւատացած եղէք, նրանք կը-
վարձատրեն ձեր ալդ աշխատանքը՝ լիուլի բա-
ւականութիւն տալով ձեր հետաքրքրութեա-
նըն ու հարցասիրութեանը։

Սակայն նախքան ալդ՝ դեռ պէտք է
ծանօթանալ ճիճուի տնակի—ընի հետ։ Բայց
դրա համար անհրաժեշտ է, որ գնաք ալգի կամ
բանջարանոց, ուր աւելի շատ կան դրանցից։
Երբ գնաք, ուշադրութեամբ նալէք դետ-
նին. ալդտեղ ձեր աչքին կ'ընկնեն բաղի փետու-
րի լայնութեամբ բազմաթիւ անցքեր, որոն-
ցից մի քանիսը խցուած կըլինին տերևներով,
իսկ միւսների վրայ հող կըլինի ածուած։ Այդ
հողը եթէ թիակով զգուշութեամբ վերցնէք,
կընկատէք որ ալդ անցքը տանում է դէպի
մի բաւականին խոր բոլն։ Ահա հէնց ալդ է
կարմիր-ճիճուի տնակը, որի մէջ, ինչպէս ա-
սացինք, ամբողջ օրը մնում է նստած՝ վախե-
նալով գուրս գալ Աստծու լոյս աշխարհ։

—Ի՞նչ է շինում ալնտեղ։

—Ուղիղն ասած՝ իսկապէս ոչինչ, այլ
ալդ ըսպէին միայն ձեզանից փախչելու հոգ-

սը կըքաշէ. նա կըսկսի յական թօթափել խոր
մտնել հողի մէջ: Իսկ դրանից մի քիչ առաջ՝
քանի որ դուք չկալիք, նա ամենեին բան
չէր անում, թէ միայն գործ չհամարենք տե-
րեւները ծով-ծով լամլամելը*), որոնցով փա-
կուած էր բնի անցքը: Ինչպէս երեսում է
այդ տերեւները ճիճուի համար թէ կերակու-
րի տեղ են բռնում և թէ դռան տեղ ծա-
ռայում: Գիշերով եթէ մօտենաք կարմիր-ճի-
ճուի բնին, ինչպէս որ ասացինք, կըտեսնէք որ
տանտէրը՝ պոչը թողնելով ներսը, մարմնի
դուրս բերած մասը մի ներքին բաւականու-
թեամբ ու նազկըթելով տարուբերում է աջ ու
ձախ՝ ներշնչելով գիշերալին թարմ օդը: Այդ
դիրքով նա մի քանի ժամ զուարճանում
է, քանի գեռ բոլորովին մութն է լինում,
բայց հէնց որ նախազգում է լուսանալու ա-
ռաջին նշանները, անմիջապէս սկսում է աշ-
խատանքի կենալ: Եւ լաւ է անում. եթէ ոչ
շուտով կըծագի արեգակը, իսկ նրա հետ էլ
կըզարթեն նաև թոշունները, և այնուհետեւ
վայր կըգալ կըտանի այն ճիճուին, որ չկարո-
ղանալ իւր ժամանակին փախչել ու թաք-

*.) Անատամ մարդու ծամելը կամ ծամծմելը՝
լամլամել է ասւում:

նուել։ Բացի դրանից ցըտի վերաբերմամբ ճի-
ճուն շատ դիւրազգաց է. իսկ լայտնի է թէ
առաւօտներն աւելի ցուրտ է լինում։

Բայց պէտք է ասած՝ շատ լաւ աշ-
խատել է իմանում։ Եթէ ուշադրութեամբ
դիտէք, կըտեսնէք որ նա ամենայն եռանդով
և մեծ հմտութեամբ տերևներ է քաշ տալիս
դէպի իւր բոյնը, որոնցով նա դռնակ է շե-
նում իւր տնակի համար, որպէսզի թէ ցըր-
տից պաշտպանւած լինի և թէ առաւօտեան
պատրաստի նախաճաշիկ ունենայ։ Իսկ տերև-
ներ չեղած ծամանակ դռնակը շինում է ու-
րիշ միջոցով, որի համար շատ կարելի է թէ
տնազ անէք, եթէ իմանաք։ Սակայն լաւ
վերահասու որ լինիք, փոխանակ տնազ անելու,
կըզարմանաք նրա այդ խելացի հնարագի-
տութեան վրայ։ Այդ նպատակի համար նա
մարմինը թեքում է գլուխ դէպի վայր, և
սկսում է ամենայն եռանդով աշխատել իւր
զօրեղ մկանունքներով. մի ըսպէից լետոյ ճի-
ճուի գլուխը բնի մէջ կըլինի, իսկ միւս մա-
սը կըմնայ բնից դուրս. ահա հէնց այդ ըս-
պէից է նա ձեռնարկում իւր տնակի դուռը
շինելուն։ Եւ ճիճուն սկսում է մեծ ջանասի-
րութեամբ հող կուլ տալ, որ մտնելով նրա
ստամոքսը և անցնելով ամերիկական բուրով՝ բոլոր սը-

նընդարար մասերը ծծւում են ու տարածւում նրա մարմնի մէջ, իսկ անպէտք մնացորդները նա դուրս է թափում գետնի երեսը այն անցքով, որ կայ իւր ետևի մասի վրայ: Այդ անպէտք մասերը՝ որ բոլորովին հողի նման են ու հողի պէս էլ սևագոյն, իրար վրայ դարսում է ուղղակի բնի անցքի առաջ և... դուռն արդէն պատրաստ է: Դրանից լետոյ նա շուռ է գալիս բնի մէջ և գլուխը դարձնում դէպի վեր: Հենց այդ դիրքի մէջ էր, որ դուք տեսաք նրան: Աչա այդ պարզ կերպով է անցկացնում ճիճուն իւր օրերը:

Բայց այդ երկար չի տեսում: Անցնում է ամառը, գալիս է աշունքը. ծառերը մերկանում են իրանց տերևներից. թոշունները երամ-երամ չուռմ են դէպի հարաւ՝ աւելի տաք երկիրներ. և այդպէս ամեն բան անցնում գընում է. վրայ է հասնում ալեւոր պապին—ցուրտ ձմեռը, հետը բերելով՝ ինչպէս ամենքիս, այնպէս էլ խեղճ կարմիր-ճիճուի համար հազար ու մի հոգս ու կարիք:

Պ

Ինչպէս ամենքդ էլ գիտէք, գետնի
վերին շերտում շատ աւելի ցուըտ է, քան
ներքին շերտում. ուստի երբ ձմեռը վը-
րալ է հասնում, կարմիր-ճիճուներն աշխա-
տում են որքան կարելի է խոր մտնել գետ-
նի մէջ, ուր նրանք ընդարձակում լայնա-
ցնում են իրանց տնակը, պատերը սի-
րուն սուաղում իրանց իսկ արտաթորութեամբ,
և մէջը պառկում ու քուն մտնում և ալդպէս
մնում մինչի գարուն։ Այդտեղ նրանց համար
թէ աւելի տաք և թէ ամեն բանով լար-
մար. իսկ ուտելիքի կարիք չեն զգում, քանի
որ թմրած են։ Նատ անգամ մի քանի ճիճու
իրար են փաթաթւում, մի ընդհանուր կծիկ
կազմում ու ալդպէս ճիտ արած—փաթա-
թորուած խոր քուն մտնում, այսինքն թըմ-
րում։ Խոր քուն մտնելիս այդպէս ճիտ անելու
պատճառն այն է, որ այդ գիրքով թէ աւելի
տաք և թէ աւելի փափուկ է լինում։

Կարմիր-ճիճուները երբեմն մէկ սաժէ-
նից աւելի խորն են մտնում գետնի մէջ։

Հէնց որ գարունը հասնում է, գետինն
սկսում է տաքանալ ու նոր կանանչով ծած-

կուել, ճիճունելն իրանց թմբութիւնից դուրս
են գալիս—արթնանում են և գուրս սողում
բներից։ Ահա այդ ըոպէից նորից սկսւում է
նրանց կեանքը, որ լի թէև է ծանր աշխա-
տանքով ու հոգսերով, բայց որ զուրկ չէ նաև
քաղցրութիւններից։

—Ի՞նչպէս թէ... Այդ չնչին, փոքրիկ ա-
րարածը միթէ այնքան խելք ունի, որ կա-
րողանալ կեանքի քաղցրութիւններն զգալ։

—Ճիշտ է, սկզբում անհաւատալի է թը-
ւում, որ այդպիսի մի չնչին արարածը ևս
կարող է մտաւոր ընդունակութիւն ունենալ,
մանաւանդ որ ոչ լսում է, ոչ էլ տեսնում,
և մինչև իսկ մեծ դժուարութեամբ է զա-
նազանում լուսը մութից։ սակայն Դարվինը՝
ուսումնասիրելով կարմիր-ճիճուների կեանքն
ու սովորութիւնները, եկել է այն եզրակացու-
թեան, որ ճիճուն ևս մի որոշեալ չափով
խելք ունի։ Եւ նշանաւոր բնագէտին այդ
եզրակացութեան բերողը հետևեալ փաստերն
են եղել.

Կարմիր-ճիճուների վրայ փօրձեր անելիս
Դարվինը նկատել է որ նրանք սովորութիւն
ունին իրանց բների անցքը ծածկել փոք-
րիկ առարկաներով։ Այդ նպատակի համար
նրանք սովորաբար տերևներ են գործ դնում,

իսկ տերեւ չեղած ժամանակ՝ մանր դուե ճ—
փոքրիկ քարեր, և կամ թղթի կտորտանք:
Դժուար է ասել՝ թէ լատկապէս ինչու հա-
մար են ծածկում իրանց բների անցքերը.
բայց կարելի է ենթագրել, որ նրանք ալդպէս
են անուամ ինչպէս վերև էլ ասուեց, զըտից
պաշտպանուելու համար:


Բների անցքն սկսում են ծածկել սովո-
րաբար գիշերներով: Այդ աշխատութեան մի-
ջոցին ճիճուները երբեմն բաւական ծանր ա-
ռարկաներ են բարձրացնում. այսպէս օրինակ՝
բոլնը ծածկող այդ մանր քարերից ամեն մէ-
կը պատահում է որ 14 մսխալ ծանրութիւն
է ունենում:

Այդ բանից պարզ երևում է, թէ կարմիր-ճի-
ճուն այնքան էլ չնչին չէ, ինչպէս որ
սովորաբար կարծում են, և որ նա՛ իւր հա-
սակի համեմատ, շատ ուժեղ է: Սակայն խըն-
դիրը միայն կոպիտ ոլժ ունենալը չէ. այլ
Դարվինն ուզեցել է նաև իմանալ, թէ արդեօք
կարմիր-ճիճուն խելք էլ ունի թէ ոչ: Եւ
նա ինքն իրան տյսպիսի հարց է տուել՝ Ար-
դեօք ինչպէս կըվարուէր մի բանաւոր արտ-
քած, եթէ որ կամենար մի նեղլիկ անցքով
ներսողացնել այնպիսի առարկաներ, ինչպէս
որ տերևներն են: Եւ սկսել է տյսպէս դա-

տել. — Օրինակ՝ եթէ մինը կամենար գլանաձև
փոքրիկ խողովակի բերանը խցել այնպիսի ա-
ռարկաներով, ինչպէս որ են տերևները և
նրանց կոթերն ու ոստիկները, անշուշտ նա
պիտի ներս տանէր ալդ առարկաները նախ և
առաջ նրանց սրածալը կողմից. իսկ թէ ալդ
առարկաները շատ բարակ լինին խողովակի
լայնութիւնից, ալդ դէպքում հաւանական է
թէ ալդ առարկաներից մի քանիսը նա ներս
կըտանի նաև հաստ կամ լայն ծալըերից։ Իսկ
ով ալդպէս վարուի, ալդ հաստատ նշան կը-
լինի, թէ նրան ալդպէս անելու գրդողն ու
թելադրողը իւր մտաւոր ընդունակութիւ-
նըն է։

Եւ հէնց ալդ պատճառով էլ Դարվինը սաս-
տիկ հետաքրքրում էր իմանալ, թէ ար-
դեօք կարմիր-ճիճուներն ինչ կերպով են ներս
տանում տերևներն իրանց բոյնը։ Ալդ իմա-
նալու համար նա երկու հարիւրից աւելի թա-
ռամած տերեւ է հանել նրանց բներից և ու-
շադրութեամբ զննել։ Քննութիւնից երեացել
որ ալդ տերևների շատը սրածալը կողմերից
են ներս տարուել բոյնը։ Ալդ ներս տարած-
ների մեծ մասը լորու տերևներ են եղել, ո-
րոնց հիմքը, ալսինքն ներքին մասը լայն է,
իսկ վերինը սրածալը, ինչպէս որ նկարից էլ

Երեսում է։ Պարզ է որ այդ տեսակ տերեւը
նեղիկ անցքով աւելի հեշտութեամբ ներս
կըտարուի սրածալը կողմով, քան թէ նրա լալն
հիմքովը։ Բայց եթէ ճիճուներն ուղենալին այդ
տեսակ տերեւները ներս տանել կոթի կողմից,



Լորու տերը է։

այն ժամանակ տերեւի լալն հիմքը գէմ կ'ընկ-
նէր ընի անցքի բերանին։ Եւ Պարփինը նկա-
տել է որ ճիճուները լորու տերեւները ներս
են տարել միշտ էլ սրածալը կողմից։ իսկ այդ

բանն ապացուց է որ կարմիր-ճիճուները ևս խոհականութիւն ունին, այսինքն նրանք ևս մտաւոր ընդունակութեան—խելքի տէր են:

Բայց Դարվինը չի բաւականացել միայն այդքանով, այլ նա ցանկացել է հաստատ համոզուել որ կարմիր-ճիճուները՝ չնայած իրանց ողորմելի արտաքինին, այնուամենայնիւ օժտուած են մտաւոր ընդունակութեամբ:



Ուզող ենդընի տերեւ:

Այդ նպատակի համար նա ու օդ օդ ենդը օն անունով բոյսի միանման տերեւներ է ընտրել, որոնց ներքին մասն աւելի սրածալը է, քան թէ վերին մասը: Այդ տեսակ տերեւներ բոյնը կրելու համար աւելի հեշտ է ներս

քաշել նրանց ներքեւի կողմից, քան թէ վերեւի մասից: Եւ եթէ այդ տեսակ տերև գըտնեն կարմիր-ճիճուները, նախ քան տերեւի որեւէ ծալրից դէպի բոյնը քաշ տալը, դեռ ալշտքէ աշխատեն տերեւի ձեւի մասին գաղափար կազմել: Բանից դուրս է եկել, որ ճիճուները հէնց ալդպէս էլ անում են. նրանք ուղօդենդրոնի տերեւները ներս են քաշում հիմքի կողմից—ներքին ծալրից, որովհետեւ՝ ինչպէս նկարից էլ երեսում է (24 եր.), այդ կողմն աւելի սրածալը է: Առհասարակ կարմիր-ճիճուները շատ լաւ են վճռում այն հարցը, թէ այս կամ այն տերեւը բոյնը տանելու համար ինչպէս է աւելի լարմար: Իսկ երբ վճռում են տերեւի հիմքից քաշել, նրանք ստիպւում են իրանց սովորութեան բոլորովին հակառակը գործել: Այդ դէպքում հետաքրքիրն այն է որ ճիճուները համարեա կոյր լինելով՝ էլի մի կերպ կարողանում են լոլսը մութից զանազանել, բայց անձեռնհաս են առաջկաները որոշել. ուստի՝ որպէսզի կարողանան տերեւի ձեւի մասին որոշ հասկացողութիւն կազմել, նրանք պէտք է շօշափեն: Եւ ճիճուները հէնց ալդպէս էլ անում են նախքան տերեւն իրանց բոյնը տանելը:

Ե

Կարմիր-ճիճուն՝ զուրկ լինելով որևէ
արտաքին գործարանից, իւր համար տը-
նակ փորելիս հարկադրուած է շատ աշ-
խատել:

Եթէ գետինը փափուկ է, ճիճուն ուղղակի
գլխի կողմով ծակում է հողը՝ տեղնուտեղը
արագ-արագ պտըտուելով գչիրի նման: Այդ
ձեռվ նա բաւական շուտ է փորում, այն է՝
մի քառորդ կամ կէս ժամում: Սակայն մեր
պստիկ հերոսի աշխատանքն ալդպէս հեշ-
տութեամբ չի լաջողում, եթէ գետինը կարծը
է, այսինքն շատ է պինդ: Վերջին գէպքում
ճիճուն հետևեալ ինքնուրովն միջոցն է գործ
դնում. նա սկսում է ամենայն եռանդով հող
կուլ տալ, մինչև որ աղիքները լաւ լքցուին,
որից լետոյ մեր փոքրիկ գետնափորը դուրս
է սողում և ալդտեղ արտաթօրում կուլ
տուածն ու կրկին վերադառնում նոր բե-
ռի համար. և ալդպէս փորուածքի համե-
մատ նա հետզհետէ աւելի ու աւելի խորն է
մտնում գետնի մէջ:

— Դէ հիմտ ուղիղն ասացէք, այդ կեր-
պով ու այդ ձեռվ իւր համար ճանապարհ

Հարթելով բոյն շինելը միթէ հետաքըլը-
քիր չէ:

— Խաչը վկալ որ հետաքըլքիր է:


— Հապա ուրիշ ի՞նչ անեն խեղճ անա-
սունները, քանի որ փորելու համար բացի
բերանից ու աղիքներից էլ ուրիշ բան չու-
նին՝ ոչ թաթիկներ և ոչ տոտիկներ: Բայց այն
էլ պէտք է ասած, որ այդ կերպ վարուելով
նրանք երկու նպատակի են հասնում. մին՝
որ իրանց համար բոյն են պատրաստում, մէկ
էլ՝ որ գետնի մէջ գտնուած պէտքական նիւ-
թերից սնունդ են ստանում:

Դաշտում, ալգումէջ կամ բանջարանոցում
տեղ-տեղ հողի բաւական մեծ կոյտեր են լի-
նում, որոնց բարձրութիւնը երեք բժաշա-
փից աւելի է, իսկ տրամագիծը, ալսինքն
լայնութիւնը՝ մօտ մի բժաշափ: Այդ կոյտե-
րը կարմիր-ճիճուների արտաթորութիւններն
են, որոնք սովորաբար փոքրիկ աշտարակի
տեսք են ունենում: Ահա այդ տեսակ կոյտից
մինն է ալս նկարը (Եր. 28), որ պատկերա-
ցրած է լուսանկարով հանածից՝ իւր բնական
մեծութեամբ:

Այդ կոյտի ներսից մի ճանապարհ է անց-
կացրած, որ վերջաւորւում է աշտարակի վերև
մի բացուածքով: Կարմիր-ճիճուն ահա այդ

ճանապարհով է դեպի վեր կըում իւր աղիք-
ների մէջ ժողոված հողը: Աշտարակի գլխից
ալդ ուղին ձգւում է մինչև ճիճուի ստորերկ-
րեալ բոլնը:

Ինչպէս ար-
դէն ասացի, ճի.
ճուի բոլնը մի
սաժէն և երե-
մըն էլ դրանից
աւելի խորնէ լի-
նում շինուած,
հետևապէս կա-
րող էք երևա-
կալել, թէ որ-
քանչարքաշ աշ-
խատանք, ինչ
ոլժ և որքան ե-
ռանդ պէտք է
գործ դնէ ալդ
չնչին արարա-
ծը, որ կարո-
ղանալ այդքան խորութեան մէջ իւր համար
բոլն շինել:



Կարմիր-ճիճուի արտաթորութիւ-
նից գոյացած աշտարակաձև կոյ-
տը, որ գտնուել է Նիցցայի
Մջակայքում:

Կարմիր-ճիճուները երբ իրանց բները փո-
րում պըճնում են, այնուհետև սկսում են ալդ
բների պատերը մեծ խնամքով սուաղել կեր-

մակ—բոլորովին մանը, հողի շերտով, որ նը-
րանք արտաթորում են իրանց մարմնից:

—Ա՞լդ ինչու համար են ալդակս ա-
նում:

—Որսվհետեւ ալդակս սուաղած—սրած,
պատերն աւելի դիմացկուն են, և նրանց քըն-
քուշ մորթին ազատ է մնում փոքրիկ սուր-սուր
քարերից ճանկուռելուց, որոնցից շատ կայ դետ-
նի մէջ: Երբեմն էլ սուաղելուց լետոյ պատե-
րին տերեներ են փակցնում, որ ճիճուի հա-
մար նոյնն է, ինչ որ մեզ համար մեր սե-
նեակների պաստառները:

Ճիճուների բների բոլորովին ներքին մա-
սը, այսինքն ամենախոր տեղը, աւելի ընդար-
ձակ է լինում. այդ մասը բնակիչների ննջա-
րանն է և միևնոյն ժամանակ նաև ձմերա-
նոցը: Իսկ մենք գիտենք, որ ձմեռն սկսուե-
լուն պէս ճիճուներն ալդտեղ են խորասուզ-
ւում և քոյլ ու եղբօր պէս ճիտ արած—փա-
թաթորուած խոր քուն մտնում՝ թմրում
մինչի գարուն:

Կարմիր-ճիճուներն իրանց ննջարանը սո-
վորաբար սալարատակում են մանրիկ քարե-
րով և կամ ամրացնում զանազան բոյսերի
սերմերով: Երեսի ալդ էլ նրանց համար նոյ-
նըն է, ինչ որ մեզ համար մեր տների տախ-

տակամածը, որ մեզ պաշտպանում է գետնի խոնաւութիւնից:

—Ի՞նչ խելօքն են ալդ պստլիկ արարածները:

—Այո՛, ճշմարիտ որ խելօք են, և չնայելով նրանց ալդպէս պստիկ լինելուն ճիճռւները իրանց ալդ գործերով ահագին օգուտ են բերում նաև մարդկանց:

Սաղմոսերգու Դաւիթ մարդարէն՝ կամենալով մարդուս ոչնչութիւնը ցոյց տալ, իւրերգերից մէկի մէջ ասում է՝ «Ես մի չնչին որդն եմ»:

Բայց որդը՝ կարմիր-ճիճռւն ալնքան էլ չնչին չէ, ինչպէս որ կարծում են շատերը. որովհեաւ եթէ ճիճռւները չլինէին, շատ կարելի է թէ մարդիկ սովից մեռնէին և մեր բոլսերով ծածկուած մարդագետինները, դաշտերն ու խոտաւէտ արօտատեղինները մերկ անապատներ դառնալին՝ զուրկ ամեն տեսակ բուսականութիւնից:

Այո՛, ալդ ասածներս կարող են զարմանալի թուալ ձեզ, բայց և այնպէս շատ ճշմարիտ են: Եւ ահա թէ ինչո՞ւ:

Մի կողմը թողնելով ուրիշ ազգութիւնները, մեր Հայ ազգը, որ հիմա մօտ չ ի ն գ միլիօն է, դրա փոքրամասնութիւնն է միայն վաճառականութեամբ, արհեստներով և այլ աշխատանքներով պարապում, այն ինչ ազգիս մեծամասնութիւնը պարապում է հողագործութեամբ—երկրագործութեամբ, այսինքն հացաբույսեր և առաւելապես ցորեն մշակելով է ձեռք բերում իւր ապրուստը՝ գլխաւորապես հացը, որ նաև ամենքիս անհրաժեշտ սնունդն է կազմում։ Այդ հացն ստացւում է ալիւրից, այսինքն աղացած ցորենից, իսկ ցորենը բուսնում է երկրի վրայ։ Բայց որպէսզի հարկաւոր քանակութեամբ ցորեն աճէ, պէտք է հերկել—երկիրը վարել։

—Իսկ գիտէք արդեօք, թէ ով է գլխաւոր և ամենաժրածան հերկողը։

—Ի՞նչպէս չգիտենք. երկրագործը։

—Ղորդ է, երկրագործն է, բայց նա մենակ ինքը չէ, այլ նա մի ուրիշ ընկեր ևս ունի, որ իրանից աւելի լաւ հողագործ է։

—Ո՞վ է այդ։

—Ո՞վ, կարմիր-ճիճուն։

—Բայց միթէ ալդ կարմիր-ճիճուն, ալդ լսլրտուկը...

— Ալո՛, ալո՛, ուրիշ ոչ ոք, այլ ալդ՝ ըստ
երեսութին չնչին, տեսքով անճոռնի ու զը-
զուելի ճիճուն, որին ամենքն արհամարհում
են, որից ամենքը՝ չգիտեմ թէ ինչո՞ւ, զզւում
են. և նոյն իսկ ինքներդ ևս մեղք չէք հա-
մարում՝ ձկներին հրապուրելու համար ձեր
կարթի ծալրին անցկացնել, և շատ անգամ էլ
ձեր ոտի տակ ընկած ժամանակ, առանց խըդ-
ճահարուելու, տրորել ու անցել, մի ըոպէ
անգամ չմտածելով, որ դուք ձեր ալդ ան-
խիղճ արարքով նախ վնասում էք խեղճ
երկրագործին՝ սպանելով նրա ամենաընտիր
օգնականին, և երկրորդ՝ ձեզ, քանի որ երկ-
րագործի արիւնքը տին մշակած հացն է,
որ վայելում էք ամեն օր:

Զ

Աչքի առաջ ունենալով ըոլոր վերի ա-
սածները, ես հաւատացած եմ որ դուք ալժմ
շատ էք հետաքրքրուում գիտենալ, թէ ալդ
չնչին արարածն ինչպէս կարող է հերկել:
Բայց ձեզ հետաքրքրող հարցի պատաս-
խանը տալուց առաջ, ես կըփափագէի դեռ

ձեզ հարցնել, թէ արդեօք երկիրը հերկել կամ հողը վարել ասելով Բնչ էք հասկանում, և թէ ինչո՞ւ համար են հերկում երկիրը...

— Զգիտէք... Բան չկալ. ուրեմն լըսեցէք, ես ասեմ թէ ինչո՞ւ.

— Երկիրը հերկում են, որպէսզի հողը փափկի ու փխրուն դառնալ ենրավերին ու ներքին շերտերն իրար խառնուեն. որովհետև այդ տեսակ խառնխտուած, փափուկ ու փխրուն հողի մէջ աւելի հեշտութեամբ է ծծւում ջուրը և օդն աւելի լաւ է թափանցում: Իսկ դուք էլ գիտէք, որ օդն ու ջուրը ամենաանհրաժեշտ ամենակարեւոր բաներն են ինչպէս ամենքի ու ամեն բանի համար, այնպէս էլ սերմերի համար. առանց օդ ու ջրի սերմերը ոչ կըծըլեն, ոչ կըծաղկեն և ոչ էլ մեր ցանկացած պըտուղը կըտան:

— Ուրեմն երկիրը նրա համար են հերկում, որ հողը իրար խառնխտուելով փափկի ու փխրունանալ, որպէսզի առատ բերք տալ:

— Այո՛, հէնց դրա համար:

— Բայց չէ որ երկիրը հերկելու համար գութան կամ արօր է հարկաւոր:

— Ի հարկէ. բայց հօ ճիճուի խելքն այնքան չի կտրում, որ իւր համար գութան կամ

արօր շինի. և նոյն իսկ թէ խելքը հասնէր
էլ ալդ բանին, առանց ոտ ու ձեռն ու-
նենալու բնչպէս պիտի շինէր ալդ գործիքնե-
րը և բնչպէս գործադրէր։ Բայց հետաքրքի-
րըն էլ հէնց ալդ է որ՝ չնայելով մեր չափա-
զանց մեծութեանը՝ համեմատելով մեզ ճի-
ճուի հետ, մենք առանց գութան-արօրի
չենք կարողանում եօլա-գնալ, այն ինչ
ալդ չնչին արարածը եօլա է գնում ոչ միայն
առանց գութան-արօրի, այլև առանց ոտ
ու ձեռի։

Նշմարիտ է ասած, թէ կարիքը մար-
դուս հնարագէտ է դարձնում։ Ճիճուների ամ-
բողջ կազմուածը շատ պարզ լինելով, նրանք
շատ հասարակ կերպով են վարւում նաեւ այս
դէպքում։ իսկ թէ բնչպէս, ալդ ձեզ մասամբ
լայտնի է վերևի պատմածից։

Կարմիր-ճիճուները երբ կամենում են ի-
րանց համար բուն շինել, նրանք՝ ինչպէս
տեսաք, սկսում են ամենայն եռանդով հող
կուլ տալ, որ մարսելով՝ միջի սննդարար մա-
սերը իւրացնում են, իսկ անպէտք մնացորդը
դուրս բերում երկրի երեսը և այդտեղ
երար վրայ գարսոտում, որ լետոյ շաղ է
անցնում, ալսինքն ցըիւ է գալիս։

Ահա ալդպիսով երկրի ներքին շերտը խառնը ուղարկում է վերին շերտի հետ։ Այս էլ կալ որ նըրանց աղիքներով անցկացած հողը շատ է մանրը ուղարկում և փխրունանում, որով աւելանում է նաև հողի աճեցողութիւնը։ Բայց դեռ ալդ բոլոր չեն։

Կարմիր-ճիճուներն ուտելով վալը թափուած տերևները, մարսում են և փոխարէնն իրանցից արտաթորում բոլորովին պատրաստի և ամենաբերը սևահող, որի վրայ շատ լաւ են աճում ամեն տեսակ բոյսեր և մանաւանդ հացահատիկներ—ցորեն, գարի, հաճար և այլն։

Դիտուած է որ ինչ տեղ շատ կալ կարմիր-ճիճու, այնտեղ հողը՝ միշտ բերը ու առատաբեր է լինում, եթէ որ բնական պատրհար—երաշտութիւն, կարկուտ, մորեխ և այլն չեն պատահում։

Այեն աեսակ հող՝ նախքան արգաւանդ, այսինքն բերը դառնալը և բուսականութեամբ ծածկուիլը, ոչ թէ մի կամ երկու, այլ շատ և շատ անգամ է մտնում ճիճուների ստամոքսը և աղիքների միջով անցնելով դուրս գալիս։

Ի հարկէ թէ զարմանալի է և թէ անհաւատալի, որ ճիճուի պէս փռքը իկ, շնչին

կենդանին կարողանալ ալգալէս օգտակար գործ կատարելով մարդկանց մեծ ծառայութիւն մատուցանել. բայց այս կայ, որ երկը մէջ գտնուած կարմիր-ճիճուների թիւն այնքան մեծ է, որ կարծէք ստորերկրեալ մի զօրաբանակ լինի:

Դաշտի իւրաքանչիւր քառակուսի արշին տեղի վրայ քնակւում են քչիցը երեք հատ ճիճու. ալգում երկու անգամ աւելի է դաշտում եղածից: Մի դեսեատին (2400 ք. ս. կամ մօտ $1\frac{1}{4}$ օրավար) դաշտի վրայ ապրում են մօտաւորապէս 75-հազար ճիճու, որոնք մի տարուան ընթացքում ամեն մի դեսեատին դաշտի վրայ հազար փթից աւելի հող են դուրս ձգում, որ իւրաքանչիւր քառակուսի արշին տեղին երկու գրվանքալ է գալիս:

Դարվինը հաշուել ու իմացել է որ կարմիր-ճիճուների արտաթորութիւններից ամեն հինգ տարում մի բժաշափ (դիւիմ) հաստութիւն ունեցող հողի շերտ է գոյանում երկը վրայ, որ չորանալուց լետով հիանալի սևահող, այսինքն՝ լաւ վարելահող է դառնում:

Մի դարում կամ 100 տարուան ընթացքում ճիճուների արտաթորութիւններից կազմւում է արգաւանդ հողի մի շերտ, որի հաստութիւնը հաւասար է երեք քառորդ արշինի:

— Բայց ճիճուները որտեղից են վերցնում
ալդ արգաւանդ հողը, որ նրանք դուրս են
բերում երկրի երեսը:

— Ելի միւնոյն հողից, որ ասել է թէ
նրանք հողի քանակութիւնը չեն աւելացնում,
այլ միայն նրա վերին ու ներքին շերտերն են
իրար խառնխտում, որ նոյն է թէ հերկում են,
ալսինքն փափկացնում ու փխրունացնում են
հողը:

Հ

Ասացինք որ կարմիր-ճիճուների արտա-
թորութեան միջոցով ամեն հինգ տարէնը
մէկ անգամ ներքեւից վերև բերուած հողի
հաստութիւնը հաւասար է մի ըթաշափի
(դիւիմ): Ալդ նշանակում է հարիւր տա-
րուան ընթացքում ալնքան հող է կրուում
ներքեւից վերև, որ երկրի ամենաստորին շեր-
տերը խառնխտում են ամենավերին շեր-
տերի հետ. ասել է թէ 100 տարուան ընթաց-
քում կարմիր-ճիճուները շատ և շատ անգամ
են երկիրը հերկում ճիշտ ալնպէս, ինչպէս

որ գութանով մենք կարող ենք հերկել միայն մի անգամ, եթէ որ հնար լինէր գութանով պատառել հողի կուրծքը երեք քառորդ արշինաչափ խորը։ Բայց ընդհանրապէս գութանը մտնում է հողի մէջ ընդամենը մի քառորդ արշին և կամ դրանից մի քիչ աւելի։ Ալզալիսի հաստութեամբ հողի մի շերտ կարմիր-ճիճուները կարող են հերկել 34 տարուան ընթացքում։

Իսկ այդ բաները շատ պարզ ապացուց են, թէ գլխաւոր հերկողը — գետինը վարողը ոչ թէ երկրագործն է, ալլ այն չնչին արարած կարմիր-ճիճուները, որընց անարդարացի կերպով, կամ աւելի ուղիղն ասած՝ մի թիւ. ըիմացութեամբ — սխալ հասկացողութեամբ ամենքդ էլ արհամարհում էք։

Եւ ուղիղ որ՝ աշխատասէր երկրագործը իւր գութան-արօրով երբէք չէր կարող հասնել այնպիսի խորութեան, որին հասնում են կարմիր-ճիճուները, թէպէտեւ վերջինների համար անհրաժեշտ է ամբողջ դարեր աշխատել անդադրում։

Դրանից էլ այն է դուրս գալիս, որ եթէ հարկաւոր լինէր 34. տարէնը մէկ անգամ ցանել, ապա ուրեմն երկրագործը կարող էր հողը չհերկել, ալլ ամենայն վստահութեամբ

իւր լոյսը դնել կարմիր-ճիճուների վրայ: Հետևապէս եթէ արդարութեամք դատէք, կըխոստովանուէք, որ ճիճուների նման փոքրիկ արարածների համար ալդ էլ շատ և շատ է, և որ բոլորովին ի զուր և անարդարացի կերպով արհամարհուած ալդ չնչին կենդանիները՝ դատարկ, անմիտ ու աննպատակ բաների վրայ չեն գործ գնում իրանց ժամանակը, ինչպէս որ մաբդկանցից շատերը:

Ի հարկէ դուք ամենևին չէիք էլ երեակալում, որ կարմիր-ճիճուներն ալդպէս լաւ նեցուկ, ալսինքն ընտիր օգնականներ են երկրագործին:

Սակայն բացի վերև ասածներից էլի շատ զարմանալի բաներ կարելի է պատմել կարմիր-ճիճուների կատարած գործերից:

Օրինակի համար տարեք մի քար դրէք արօտի համար որոշուած մի մարդագետնի վըրալ և թողէք մնայ այնտեղ, միայն թէ դըրած տեղը միտներդ պահեցէք որ չմոռանաք:

Եթէ դուք մի քանի տարուց յետոյ գնաք նոյն տեղը, ձեր դըրած քարը չէք դտնիլ, որ քիչ զարմանք չի պատճառիլ ձեզ, քանի որ քարը ոչ թեւեր ունէր որ թուչէր և ոչ ոտներ որ փախչէր, ուրեմն ուր կարող էր կորչել:

Բալց գուցէ դուք աւելի զարմանաք, եթէ
ասեմ որ ձեր դրած քարը ոչ թռել է և ոչ
փախել, այլ մտել է հողի մէջ, կամ աւելի
ճիշտն ասած՝ կարմիր-ճիճուները նրան թաղել
են հողի տակ. իսկ քարը դրած տեղի վրայ միայն
մի փոքրիկ թմբիկ է գոյացել, որ ծածկուածէ
սիրուն կանանչ խոտավ:

—Կարմիր-ճիճուներն ինչպէս կարող է ին
քարը թաղել հողի տակ, որ կարելի է իրան-
ցից շատ և շատ ծանր է:


—Այդ հարցի պատասխանը Դարվինն ար-
դէն տուել է: Ահա թէ ինչ է ասում նա ալդ
մասին.

«Եթէ որ անհարթ ձեի մի քար ձգուի
գետնին, նա կը ենուի երկրի մակերեսովթի
վրայ անպատճառ իւր աչքի ընկնող մասերով։
Մի կորճ ժամանակամիջոցից լետոյ կարմիր-
ճիճուներն իրանց արտաթորութեամբ կը լքցը-
նեն քարի ներքին մակերեսովթի ըոլոր գատարկ
տեղերը՝ փոսիկները, որովհետեւ ճիճուները
շատ են սիրում քարի պաշտպանութեան
տակ ապրել։ Երբ այդ փոսիկները լքցւում
են, այնուհետեւ ճիճուներն սկսում են իրանց
կուլ տուած՝ կլանած հողն արտաթորել
նաև քարի սահմաններից դուրս. ահա ալդ-
պիսով քարի շրջապատի, ալսինքն չորս կող-

մի տարածութիւնը, հետզհետէ սկսում է բարձրանալ: Եւ որովհետև ճիճուների բներն ուղղակի քարի տակին են, ուստի ժամանակի ընթացքում հողը վայր է նստում—խոր է գնում, որից և քարը նոյն չափով խոր է գնում, այսինքն նոյնպէս վայր է նստում»:

Դարվինի այդ ասածներից կարծեմ հասկանալի է, թէ վերջն բնչ պիտի լինի:

Քարը իւրաքանչիւր տարի հետզհետէ քիչքիչ վայր նստելով, աւելի և աւելի խոր կ'երթալ, իսկ վերևեից և կողքերից կը ծածկուի ճիճու-



Աե՞ն քսովլը մի՞ն—լայնութեան ուղղութեամբ հատուած մի մեծ քարի, որ ՅՅ տարի ընկած է եղել մարդագետնի վրայի

ների արտաթորութեամբ, որից և՝ մի որոշեալ ժամանակամիջոցից լետոյ, կը կազմակերպուի այն բերրի հողի թմբիկը, ուր քարն էր դրուած: Կարմիր-ճիճուները՝ բացի քարից, ճիշտ այդ միևնույն կերպով են վարւում նաև ամեն

տեսակ մեծ ու փոքր առարկաների հետ, որ
ընկած են լինում երկրի երեսին: Գե-
տինը պեղելիս—փորելիս շատ է գտնուում քա-
րեղէն գործիքներ, այն է՝ քարեալ կացիններ,
նետերի ծալրերևալն: Ալդ գիւտերից շատերն
ով գիտէ թէ մեզանից քանի՛ հազար տարի ա-
ռաջ ապրած մարդկանց թողած բաներ են, որ
ճիճուները՝ իրանց բնածին սովորութեամբ
թաղել են գետնի մէջ, որպէս մեր նախնիք-
ներից մնացած լիշտակ լետնորդներիս, ալ-
սինքն մեզ:

Դուք ամենքդ էլ գուցէ նկատած լինիք,
թէ ինչպէս շուտ վայր են նստում ու գետ-
նին հաւասարուում գերեզմանաքարերը և լա-
ճախ էլ բոլորովին ծածկում ու անլայտա-
նում: Փորձի համար եթէ մի ալդպիսի քար
հանէք գետնից, իսկոյն կ'իմանաք, թէ ովքեր
են եղել ալդ քարի անլայտանալու պատ-
ճառը:

—Զինք թէ էլի կարմիր-ճիճուները:

—Ալո՛, էլի նրանք: Ալդպէս թաղուած
քարը երբեմն ծածկուելով հողի շերտով, վը-
րան սիրուն խոտ ու ծաղիկներ են բսնում,
այնպէս որ շատ անգամ դժուարանում ենք
մեր սիրելի հանգուցեալների գերեզմանները
գտնել:

Բայց դեռ այդ այնքան էլ ոչինչ, որ
կարմիր-ճիճուները հողը փորելով ու հետըզ-
հետէ վայր նստեցնելով թաղում են գերեզ-
մանաքարեր, կացիններ, նետեր ու զանազան
մանր-մունը բաներ, այլ նրանք կարողանում
են գետնի մէջ թաղելու անլայտացնել մինչև
անգամ ամբողջ շինութիւններ:

— Ամբողջ շինութիւններ...

— Ալո՞, ամբողջ շինութիւններ... Իրաւ
որ զարմանալու է: Եւ ահա թէ ինչ է պատ-
մում Դարվինը կարմիր-ճիճուների կատարած
ալդ տեսակ քաջագործութիւնների մասին.

— 1876 թուականի աշնան վերջերին էր.
մի հին դաստակերտի — սիրուն շէնքերով կա-
լուածքի գաւթում պեղումներ կատարե-
լիս, այսինքն գետինը փորփորելիս աշխա-
տող բանուորների բահերի ու թիերի տա-
կից հետզհետէ սկսեցին զանազան առար-
կաններ երևան գալ: Ալդ գիւտերը շարժելով
կալուածատիրոջ հետաքրքրութիւնը, ուստի
նա հրամայեց ալդ տեղին մօտիկ գտնուած և
դեռ ևս չվարած տափի մէջ մի մեծ ջրանցք
փորել: Ալդտեղ էլ բանուորները բետօնի *)

*) Բետօնը մի խառնուրդ է խճիից — մանր
քարերից կամ խոշոր աւազից ու կրից շինած: Հին
ժամանակ տների յատակը այդ զանգուածով էին
ծածկում փոխանակ սալքարերի:

շերտի են հանդիպել որ տեղ տեղ ծած-
կուած է եղել փռքըիկ ու կարմիր կղմին-
տըներով և երկու կողմից սահմանափա-
կուած կիսափուլ աւերակ պատերով։

Հաստատ է որ, խօսքը շարունակում է Պար-
վինը, այդ գտնուած շինութիւնը մի վել-
լա լի, ալսէնքն ամարանոցի ընդունարանի մէկ
մասն է, որ կառուցել են մեզանից 1500
տարի առաջ այդտեղ ապրող հռոմայեցիները։
Պեղումը շարունակելով՝ դարձեալ երևան են ե-
կել մի երկու-երեք սենեակի պատեր, բազմա-
թիւ ամանեղէն ու զանազան առարկաների
բեկորներ—կտորներ, ինչպէս նաև հռոմայե-
ցոց կալսըների ժամանակուան կտրած դրամ-
ներ, ևալն, ևալն։ Այդ դրամների վրայ
փորագրուած թուականներից հաստատապէս
կարելի է ենթագրել, որ գտնուած շինութիւ-
նը երկար տարիներ անքնակ է եղել, և հա-
ւանական է թէ վերջնականապէս աւերուել
ու աչքաթող է արուել մեզանից 1400 կամ
1500 տարի առաջ։

Կամենալով իմանալ ահագին շինութեան
խորհրդաւոր կերպով անլայտանալու պատճառը
սկսել են ուշադրութեամբ հետազոտել այդ
շէնքի լատակը և գտել են կարմիր-ճիճուների
անթիւ ու անհամար բներ, որոնց բնակիչնե-

ըը կղմինտըների տակից սկսել են դուրս հանել
իրանց գլուխները. ասես թէ մեր ալդ հետա-
քրքրական հնախոլզները ալդ կերպով կամե-
ցել են իրանց զարմանքն արտայալտել, որ
մարդիկ՝ իրանց խաղաղ ճանապարհով ընթացող
կեանքի դէմ խոչընդուներ են հանում:

Կամ շատ կարելի է ալդ ձեռվ նրանք
ուղղակի բողոքելիս են եղել, որ չար մարդիկ՝
այս կամ այն նպատակի համար խանգարում
են իրանց կանոնաւոր ընթացող կեանքը: Երևի
կարմիր-ճիճուները ևս իրանց չնչին տեղովը
հասկանում են, որ ամեն մի անարդարու-
թեան դէմ անհրաժեշտ է բողոքել:

Ալդպէս ուրեմն՝ մենք տեսանք, թէ ինչ
հրաշքներ են գործում ալդ չնչին համարուած
կարմիր-ճիճուները, որոնք իրանց համար ա-
հագին դահլիճներ են կառուցանում, փռքրիկ
քարերով էլ սալայտակում, նախասենեակ-
ներ շինում, տան պատերը սիրուն սուաղե-
լուց յետով վրան պաստառներ կացնում, և ա-
ռանց ծուլութեան, անդադրում աշխատելով էլ

փորում են հողը և զանազան մեծութեան առարկաներ անյալտացնում, նոյն իսկ ամբողջ շինութիւններ թաղում գետնի մէջ։ Իսկ ալդ բոլորն անելով նրանք հիանալի կերպով փըխը ունացնում են հողը, ալսինքն հերկում են գետինը և արգաւանդ ու բերբի գարձնում մեր վարելահողերը, մեր ալգիներն ու բանջարանոցները, որոնցից այնքան և ալնքան օդուտ ենք ստանում ամենքս էլ։

— Դէ հիմա ճշմարիտն ասացէք, սիրելի ընթերցողներ, կարմիր-ճիճունների մասին վերի բոլոր ասածներն իմանալուց լետոյ արդեօք էլի՞ կ'արհամարհէք նրանց, և չէք ամաչիլ, չէք կարմրիլ՝ պարծենալով նրանց մօտ ձեր կատարած այս կամ այն գործով։

Եթէ մինչեւ ալսօր ալգալիսի մեծամտութիւն եղել է ձեր կողմից, յուսալի է թէ էլ այսուհետեւ չի կրկնուիլ, քանի որ գուք ինքներդդ տեսաք և համոզուեցիք, թէ ինչ ու ինչ գործերի են ընդունակ ալդ չնշին համարուած փոքրիկ արարածները, և թէ ինչ հաստատուն և յուսալի նեցուկ ու օգնականներ են մեր աշխատասէր երկրագործներին, որոնք արիւն-քըտինք թափելով մեզ համար հաց են մշակում ամեն տարի։

Բայց միայն ալդքանը բաւական չէ ձեր կողմից, այլ գուշք պարտաւոր էք ձես ալդքովոր գիտեցածները պատմել ու բացատրել նաև չիմացողներին, որպէսզի նրանք ևս դադարեն կարմիր-ճիճուներին արհամարհելուց ու անդժօրէն հալածելուց, որ նրանք ևս սիրեն, քաղցր աչքով նայեն ալդ օգտակար կենդանիների վրայ և միշտ էլ բարեկամաբար վարուեն հետները:



1

9804

